Շրջակա միջավայր սնդիկը մեծ քանակությամբ արտանետվում է ածուխով աշխատող էլեկտրակայաններից, աղբայրիչ գործարաններից, ցեմենտի վառարաններից, դիակիզարաններից և այլ ձեռնարկություններից, որտեղ տեղի է ունենում այրման գործընթաց, ինչպես նաև՝ աղբավայրերից և աղտոտված տարածքներից: Սնդիկն արտադրվում է որպես կողմնակի արտադրանք որոշ մետաղների մաքրման գործընթացների ժամանակ: Ի վերջո, որոշ ազգություններ սնդիկն օգտագործում են ավանդական բժշկության, կրոնական արարողությունների և արվեստի ստեղծագործություններում:

Սնդիկի, մարդու առողջության և էկոհամակարգերի վրա դրա զգալի բացասական ազդեցության մասին բժշկական և գիտական գիտելիքների բարձրացման զուգընթաց, աճում է միջազգային համաձայնությունը մարդածին աղբյուրներից սնդիկի ազդեցության նվազեցման և հետևանքների վերացման միջոցառումների անհրաժեշտության շուրջ: Սակայն, սնդիկի համաշխարհային առևտուրը և սնդիկի տեղափոխումը ավելի երկար հեռավորություններ հանգեցնում է նրան, որ առանձին երկրներ և տարածաշրջաններ չեն կարողանում պաշտպանել իրենց բնակչությանը և շրջակա միջավայրը սնդիկով աղտոտման վտանգներից: Հատկապես խոցելի իրավիճակում կարող են հայտնվել զարգացող երկրները, քանի որ նրանք հաճախ չեն ունենում հատուկ ներուժ՝ սնդիկ պարունակող արտադրանքների, սնդիկի ավելցուկի և սնդիկ պարունակող թափոնների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, որոնք այդ երկրների տարածք կարող են մուտք գործել առևտրի միջոցով:

Հետևաբար, անհրաժեշտ է գլոբալ, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագիր, որը թույլ կտա մշակել և իրականացնել գործողությունների միջազգային ծրագիր՝ սնդիկի արտանետումները շրջակա միջավայր արդյունավետ վերահսկելու և նվազագույնի հասցնելու, սնդիկի ավելցուկների անվերահսկելի առևտուրն արգելելու և նվազագույնի հասցնելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով, որտեղ հնարավոր է, վերացնել սնդիկ պարունակող ապրանքների արտադրությունը և առևտուրը, ինչպես նաև՝ նախաձեռնել այլ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են համաշխարհային մակարդակով սնդիկով աղտոտումը զգալիորեն կրճատելու համար:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
ՀՀ, ք. Երևան, 0019, Բաղրամյան պող. 24դ, սենյակ 609
Հեռ.՝(+374 10) 52 36 04
Էլ.փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ www.awhhe.am

AWHHE

Սնդիկը թունավոր նյութ է, որը մտահոգում է ողջ մարդկությանը, քանի որ այն լուրջ վնաս է հասցնում մարդու առողջությանը, վայրի բնությանը և էկոհամակարգերին: Ընկնելով շրջակա միջավայր, սնդիկը փոխանցվում է օդային հոսանքներով, այնուհետև կրկին նստում է գետնին, երբեմն՝ բուն աղտոտման աղբյուրի մոտ, երբեմն՝ շատ ավելի հեռու: Սնդիկը կարող է հողից անցնել գետերի, լճերի և օվկիանոսների մեջ: Այն կարող է նաև տեղափոխվել օվկիանոսի հոսանքների և միգրացիա կատարող կենդանիների միջոցով:

Ձրային միջավայրում սնդիկը միկրոօրգանիզմների միջոցով փոխակերպվում է ավելի թունավոր նյութի՝ մեթիլային սնդիկի: Այս ձևով սնդիկը մտնում է սննդի շղթայի մեջ և կուտակվում ջրային օրգանիզմների, այդ թվում ՝ ձկների և խեցեմորթների, ինչպես նաև՝ դրանցով սնվող թռչունների, կաթնասունների և մարդկանց օրգանիզմներում: Ձկան որոշ տեսակներում մեթիլային սնդիկի խտությունը կարող է միլիոնավոր անգամ ավելի բարձր լինել, քան ջրում, որտեղ բնակվում են ձկները:

Սնդիկի մեկ երրորդը շրջակա միջավայր է թափանցում բնական այնպիսի աղբյուրից, ինչպիսն հրաբուխն է, մինչդեռ սնդիկի երկու երրորդ քանակությունն առաջանում է մարդու գործունեության հետևանքով: Ավելին, արդյունաբերական դարաշրջանի մեկնարկի հետ սնդիկի ընդհանուր քանակությունը մթնոլորտում, հողում, լճերում և օվկիանոսներում աճել է 2-4 անգամ: Շրջակա միջավայրում սնդիկի այդպիսի անբնական քանակը կարող է հանգեցնել էկոհամակարգերի քայքայման և զգալի վնաս հասցնել մարդու առողջությանը ողջ աշխարհում:

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

Սնդիկը, հատկապես, մեթիլային սնդիկի ձևով, չափազանց թունավոր է մարդկանց համար: Սնդիկի ազդեցությանը հատկապես ենթարկվում են պտուղը, նորածինները և երեխաները, քանի որ այն ազդում է նյարդաբանական զարգացման վրա: Երբ հղի կամ վերարտադրողական տարիքի կինն ուտում է ձուկ, որը պարունակում է մեթիլային սնդիկ, այդ թունավոր քիմիական նյութն անցնում է ընկերքի մեջ և ազդում պտղի վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մեթիլային սնդիկի խտությունը պտղի մոտ ավելի բարձր է, քան մոր: Բացի այդ, սնդիկն առկա է կրծքի կաթում, որն ազդում է երեխայի զարգացման վաղ փուլերի վրա: Երեխաներն, ովքեր սնդիկով վարակված սնունդ ուտում են վաղ տարիքում, նույնպես ենթարկվում են այդ նյութի վտանգավոր ազդեցությանը:

Մեթիլային սնդիկի ազդեցությունը բացասաբար է անդրադառնում երեխայի ուղեղի և նյարդային համակարգի զարգացման վրա: Այդ ազդեցությունը կարող է հանգեցնել ճանաչողական կարողությունների, մտածողության, հիշողության, ուշադրության, լեզուներ սովորելու կարողության, նուրբ մոտորիկայի և տեսողական տարածական ընկալման նվազեցմանը:

Սնդիկը վնասակար է նաև մեծահասակների առողջության համար: Սնդիկի ազդեցությանն առավել շատ ենթակա են բնակչության աղքատ և խոցելի խավերը, հատկապես՝ բնիկները, Արկտիկայի ժողովուրդները, կղզիների և առափնյա տարածքների և բնակչության այն խմբերը, որոնց համար որպես սպիտակուցային սննդի հիմնական աղբյուր ծառայում են ձկները և ծովամթերքները: Ոսկի արդյունահանող, հատկապես փոքր ծավալով աշխատող ընկերությունների բանվորները, հատկապես՝ նրանց ընտանիքների անդամները նույնպես ենթարկվում են սնդիկի վտանգավոր ազդեցությանը: Բացի այդ, սնդիկի ազդեցությունը վնաս է հասցնում շրջակա միջավայրի օրգանիզմներին և կարող է քայքայել էկոհամակարգերը:

Սնդիկը շրջակա միջավայր թափանցում է տարբեր աղբյուրներից: Դրանք են՝ սնդիկ պարունակող արտադրանքները և սարքավորումները, ապրանքների անմիջական արտադրության վայրը, արտադրական, այրման և հանքարդյունահանման գործընթացները, մետալուրգիական ձեռնարկությունները, ածխի այրումը, ցեմենտի արտադրությունը, թափոնների աղբավայրերը և թափոնների այրման գործարանները և այլ աղբյուրներ: Դեռևս լայնորեն արտադրվում և վաճառվում են սնդիկ պարունակող այնպիսի արտադրանքներ, որոնցից շատերի համար գոյություն ունեն այլընտրանքներ, ներառյալ՝ ջերմաչափերը, արյան ճնշման չափման սարքերը, մարտկոցները, ճնշաչափերը (բարոմետրերը), էլեկտրական անջատիչները և էլեկտրոնային սարքավորումների բազմաթիվ տեսակներ:

Արդյունավետ և մատչելի տարբերակներ դեռևս չեն մշակվել ցերեկային լույսի լամպերի համար, սակայն առկա են հնարավորություններ սնդիկի քանակությունը զգալիորեն նվազեցնելու համար՝ արտադրական գործընթացների ժամանակ սնդիկի օգտագործման քանակների և արտանետումների նկատմամբ վերահսկողության բարելավման, ինչպես նաև՝ կյանքի ցիկլի ավարտին սնդիկ պարունակող արտադրանքի վերջնական տեղադրման կարգավորման բարելավման միջոցով:

Սնդիկը շատ մեծ քանակությամբ դեռևս օգտագործվում է տարբեր արդյունաբերական գործընթացներում, ինչպիսիք են քլոր - հիմնային արտադրությունը և կատալիտիկ գործընթացները, որոնց համար գոյություն ունեն ընդունելի այլընտրանքներ: Սնդիկը մեծ քանակությամբ շարունակվում է օգտագործվել ոսկու, հատկապես փոքր ծավալով արդյունահանման ժամանակ, որը հանգեցնում է սնդիկով խիստ աղտոտման: Շատ ատամնաբույժներ շարունակում են օգտագործել սնդիկի ամալգամներ, մինչդեռ ուրիշները հրաժարվել են այդ գործելակերպից և օգտագործում են մատչելի այլընտրանքներ: